

բաներ կ'ուտէին, որոց մէջ եւ պարզ քանիկ մ'ալ: Կը տեսնէր դարձեալ անձինք՝ որ զինիէ կը հրաժարէին, ուրիշներ թանէ, եւ ոմանք հացէ անգամ: Եւ հասարակաց աւելի ընդունելի սովորոյթն էր «միտլ ինչ կերակրովն եւ ոգևպահովն եւեթ շատանալ» . եւ սակից ալ տակաւին « սակաւ ուտել, սակաւ ընկել»: Իսկ ինչ որ յատուկ էր սովորական ճաշերու, այս ինքն փափուկ եւ համեղ կերակրներ, բացէ ի բաց կը մերժեն, կ'ըսէ հաւատացելոց համար (36): Յիշեալ բոլոր ուտեստներէն միակ արգելեալն է «փափուկն եւ համահամ» (անդ), որ կը կայանար մսոյ եւ զինւոյ մէջ. այնպէս որ Յաճախապատումն ալ այս երկունիւթերէն միայն ստիպողարար կը հրաժարեցնէ պահոց մէջ, ըսելով՝ որ կարողներն ու երիտասարդութիւնը զգուշանան «ի մսոյ եւ ի զինւոյ» (86): Արդէն առաքելական պահքն ալ այս երկու տարբերէն զրկումն էր (Հո. ԺԳ, 21): Ազգային տեսակետով արդարեւ շատ կարեւոր է Յաճախապատմի վկայութիւնն իւր բարձր հնութեամբ, որ մեր առջեւ կը դնէ Հայոց հնագոյն պահեցողութեան մէջ տիրող ազատականութիւնը, որ խոտոր կը համեմատի միջնադարեան մատենագրաց անձուկ սահմանին հետ, եւ կը լուծէ ապագայ վէճերու գաղտնիքը: